ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ՄՈՏ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

**Մասնակցությամբ՝**

- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Բարսեղ Նիկողոսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Երվանդ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Մանվել Մելիքյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Նարեկ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝** **Տաթևիկ Մկրտչյանի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

**1. ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ 10.02.2025թ.կայացած գործակարգավարական խորհրդակցության ընթացքում մարզպետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքի և մարզում առկա մի շարք հրատապ խնդիրների քննարկում**

**Քննարկվեցին՝**

**Հարց 1. 2025 թվականի փետրվարի 21-ից մինչև 25-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների ղեկավարների և համապատասխան աշխատակիցների 2024 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները ՀՀ Արմավիրի մարզպետին ներկայացնելու մասին**

/Մանվել Մելիքյան-ՀՀ
Արմավիրի մարզպետի օգնական/

Մինչև օրակարգային հարցին անդրադառնալը, ՀՀ Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցության մասնակիցներին ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզպետի նորանշանակ խորհրդական Երվանդ Խաչատրյանին, ցանկանալով նրան հաջողություններ այդ պատասխանատու պաշտոնում: Մարզպետը միաժամանակ նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան որոշմամբ նրան կվերապահվի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ համարվող Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման և փաստաթղթաշրջանառությանը, ինչպես նաև Իրավաբանական բաժնին առնչվող աշխատանքների կատարման աջակցման գործառույթներ:

Այնուհետև օրակարգային հարցի կապակցությամբ ամփոփ տեղեկատվությամբ հանդես եկած ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Մանվել Մելիքյանը ընդհանուր կարգով նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ նախապես քննարկվել են ՀՀ Արմավիրի մարզպետին աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից վերը նշված հաշվետվությունների կազմման և սահիկաշարի ձևաչափով ներկայացվելիք գործընթացի կազմակերպման ուղղությամբ տարվելիք աշխատանքների մեթոդաբանությունը: Նա միաժամանակ ներկայացրեց նաև **սահիկաշար պատրաստելու ներքոհիշյալ չափանիշներն ու չափորոշիչները**.

**Հիմնական չափանիշներ**

1. **Հստակություն և համառոտություն.** Սահիկաշարի տեքստը պետք է լինի հստակ, համառոտ և հասկանալի:
2. **Տեսողականություն.** Սահիկաշարը պետք է լինի տեսողականորեն գրավիչ և հետաքրքիր: Օգտագործել բարձրորակ պատկերներ, գրաֆիկներ և դիագրամներ: Ընտրել համապատասխան գույներ և տառատեսակներ:
3. **Կառուցվածք.** Սահիկաշարը պետք է ունենա հստակ կառուցվածք: Տեղեկատվությունը պետք է լինի տրամաբանորեն կազմակերպված և հաջորդական: Օգտագործել վերնագրեր, ենթավերնագրեր և համարակալում:

**Չափորոշիչներ**

1. **Գույների համադրություն.** Ընտրել այնպիսի գույներ, որոնք լավ համադրվում են միմյանց հետ և չեն հոգնեցնում աչքերը:

2. **Պատկերների և գրաֆիկների որակը.** Օգտագործել միայն բարձրորակ պատկերներ և գրաֆիկներ, որոնք հստակ երևում են էկրանին:
3. **Անիմացիայի և էֆեկտների օգտագործումը.** Անիմացիան և էֆեկտները պետք է օգտագործվեն չափավոր և նպատակային: Դրանք չպետք է շեղեն լսարանի ուշադրությունը հիմնական տեղեկատվությունից:
4. **Սահիկաշարի տևողությունը.** Սահիկաշարը պետք է լինի այնքան երկար, որքան անհրաժեշտ է տեղեկատվությունը լիարժեքորեն ներկայացնելու համար: Խուսափել չափազանց երկար և ձանձրալի սահիկաշարերից:
5. **Տեքստի չափը և տառատեսակը.** Տեքստը պետք է լինի հեշտ ընթեռնելի: Օգտագործել բավականաչափ մեծ տառաչափ և պարզ տառատեսակ ինչպիսիք են Arial, Calibri, Helvetica և այլն:

**Տառաչափ**

- **Վերնագրեր**. 24-36pt,
- **Հիմնական տեքստ**. 18-24pt,
- **Ենթագրեր**. 20-24pt:

**Սահիկների քանակ**

- Ունենալ ոչ ավելի, քան 10-12 սահիկ,
- Կարևոր է, որ սահիկների քանակը չգերազանցի տրամաբանական սահմանը և չդարձնի ներկայացումը ձանձրալի:

**Տողերի քանակ մեկ սահիկում**

- Ունենալ ոչ ավելի, քան 5-6 տող մեկ սահիկում:

ՀՀ Արմավիրի մարզպետը, մտքերի փոխանակման կարգով անդրադառնալով մարզպետի օգնական Մանվել Մելիքյանի կողմից ներկայացված տեղեկատվությանը և այն ընդունելով ի գիտություն, **ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարեց՝** համապատասխան ժամկետներում ՀՀ Արմավիրի մարզպետին ներկայացվելիք հաշվետվությունները նախապատրաստելիս որպես ուղեցույց ընդունել վերը նշված **չափանիշներն ու չափորոշիչները:**

Այնուհետև անդրադարձ կատարվեց նաև տարաբնույթ մի շարք ընթացիկ հարցերի, որոնց վերաբերելի մասով խորհրդակցությանը մասնակցող համապատասխան աշխատակիցներին մարզպետի կողմից տրվեցին ցուցումներ:

Օրակարգային ու մի շարք ընթացիկ հարցերի քննարկմամբ և ամփոփմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2025-02-18 09:10:01 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ**

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության պետ՝ Դավիթ Դավթյան